# ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐԵՎԵԼԱԳԵՏՆԵՐԻ 7-ՐԴ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

*Մայիսի 21—23-ը Աղվերանում անցկացվեց երիտասարդ արևելագետների 7-րդ գիտական նստաշրջանը, որի աշխատանքներին մասնակցում էին ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի, Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի և Երևանի այլ գիտական հաստատությունների երիտասարդ արևելագետները, ինչպես նաև հյուրեր Թբիլիսիից ու Բաքվից։ Նստաշրջանը բացեց արևելագիտության ինստիտուտի դիրեկտոր, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ* Գ. Խ. Սարգսյանը:

*Անցկացված չորս նիստերում լսվեցին ու քննարկվեցին քսաներկու զեկուցում։*

*Երիտասարդ արաբագետների զեկուցումները հիմնականում առնչվում էին արաբական երկրների արդի քաղաքական ու տնտեսական մի շարք կարևոր խնդիրների լուսաբանմանը։ Հետաքրքրությամբ լսվեցին* Պ. Հ. Սարաջյանի *«Սիրիայի ազգային առաջադիմական ճակատի ստեղծումը և գործունեությունը»,* Գ. Վ. Նովիկովայի *«Գ. Ա. Նասերի վերաբերմունքը քաղաքական կուսակցությունների հանդեպ» և* Ն. Տ. Ձոլըմյանի *«Սիրիա-իրաքյան առևտրա-տնտեսական հարաբերությունները 1961—1967 թթ.» զեկուցումները։ Մերձավորարևելյան կնճռոտ պրոբլեմին և այդ հարցում արևմտյան տերությունների քաղաքականությանն էին վերաբերում* Հ. Մ. Գրիգորյանի՝ *«Հ. Քիսինջերի երկու առաքելությունը Սիրիա» և* Ա. Լ. Մանուչարյանի՝ *«1973 թ. հոկտեմբերյան պատերազմը Մերձավոր արևելքում և Արևմտյան Եվրոպան» զեկուցումները։*

*Նստաշրջանում լսվեցին նաև թուրքագիտության մի շարք պրոբլեմներին նվիրված բովանդակալից զեկուցումներ, որոնցում մանրամասն քննվում էին XIX դ. Օսմանյան կայսրության ներքին ու արտաքին քաղաքականությունը, այդ թվում հայերին վերաբերող հարցեր։ «Սահմանադրական շարժումը Օսմանյան կայսրությունում և հայերը», «Մերձավորարևելյան ճգնաժամը 1895—1897 թթ. և ԱՄՆ-ը» զեկուցումներով հանդես եկան* Ռ. Ա. Սաֆրաստյանն *ու* Ա. Ջ. Կիրակոսյանը: Մ. Տ. Բոզոյանի *զեկուցման մեջ լուսաբանվում էր Օսմանյան կայսրությունում XIX դ. կեսերին բարենորոգումներ անցկացնելու շուրջը իշխող դասակարգի ներսում առաջացած մի շարք խմբավորումների պայքարը։ Տպավորիչ էին* Ա. Պ. Փոլադյանի՝ *«Քրդերի արաբական ծագման միջնադարյան վարկածը» և* Վ. Գ. Ղլեչյանի՝ *«Արշալույս Արարատյան» թերթն Օսմանյան կայսրության առևտրի ու տնտեսության զարգացման մասին» զեկուցումները։*

*Հետաքրքրությամբ լսվեցին կովկասագիտության և բյուզանդագիտության պրոբլեմներին վերաբերող զեկուցումները։ «Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկիան ԺԲ դարի 30—40-ական թվականներին» զեկուցումով հանդես եկավ* Ա. Ա. Բոզոյանը: Ա. Հ. Հակոբյանի *զեկուցման թեման էր «Հայ քաղկեդոնական պատմական ավանդույթի արձագանքները Մ. Կաղանկատվացու «Աղվանից պատմության» մեջ»։* Հ. Վ. Կարապետյանը *հանդես եկավ «Ճաղադ-ճալա տերմինը և «Ճալա-Ճալեթ» տեղանունն ըստ սկզբնաղբյուրների» զեկուցումով։*

*Զեկուցումներով հանդես եկան նաև* Ա. Տ. Արասյանը *(«Մամ և Զին» վիպերգի պատմական պոետիկայի մի քանի խնդիրների մասին»),* Ա. Վ. Ստեփանյանը *(«Խոսրով Միրզայի այցը Պետերբուրգ (նոր նյութեր և ճշգրտումներ)»),* Դ. Ա. Հովհաննիսյանը *(«Իբն Քութայբայի «Գիրք տաղից և տաղասացից»-ի բնագրագիտական բննությունը»)* և Ս. Ս. Պետրոսյանը *(«ազ-Զամախշարիի «Քիթաբ ալ-Մուֆասսալ» երկի բնութագրման հարցի շուրջ»)։ Պատմության հին շրջանին էր նվիրված* Լ. Մ. Գոլովլյովայի *«Վերին Եփրատի հովտի մարզերի պատմությունը խեթական պետության կործանման նախօրեին (մ. թ. ա. XIII դ. վերջին)» զեկուցումը։*

*Նստաշրջանի աշխատանքներին ակտիվորեն մասնակցեցին ու նյութերով հանդես եկան նաև Վրաստանի և Ադրբեջանի երիտասարդ արևելագետ-պատմաբանների ու աղբյուրագետ-*

ների ներկայացուցիչները։ Թ. Հ. Աբոշիձեի, Մ. Վ. Գաբաշվիլու (Թբիլիսի), Ի. Գ. Կոպիևայի և Ռ. Բ. Հուսեյնովի (Բաքու) զեկուցումներն արծարծում էին լեզվի, գրականության, պատմության և աղբյուրագիտության հարցեր։

Աղվերանի գիտական նստաշրջանին բնորոշ էին մտքերի անկաշկանդ փոխանակությունն ու ակտիվ քննարկումը, որին մասնակցեցին նաև պատմական գիտությունների դոկտորներ Ն. Հ. Հովհաննիսյանը, Ե. Ղ. Սարգսյանը, Ա. Ն. Տեր-Ղևոնդյանը, Շ. Խ. Մնոյանը, բանասիրական գիտությունների թեկնածուներ Մ. Հ. Քոչարը, Գ. Մ. Մուրադյանը և ուրիշներ։

ՆՈՒԲԱՐ ՋԱԼԸՄՅԱՆ
ԱԼԵՔՍԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՄԻՋՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ

Հունիսի 3—6-ը տեղի ունեցավ Հայաստանի և Վրաստանի արվեստի պրոբլեմներին նվիրված երկրորդ միջհանրապետական կոնֆերանսը։ Այն կազմակերպել էին ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտը, Վրացական ՍՍՀ ԳԱ Գ. Չուբինաշվիլու անվան արվեստի պատմության ինստիտուտը և Հայաստանի ազգագրության պետական թանգարանը։ Կոնֆերանսը, որի աշխատանքներին մասնակցում էին երկու եղբայրական հանրապետությունների շուրջ 50 գիտնականներ, բացեց ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի դիրեկտոր, ակադեմիայի թղթակից անդամ Ռ. Զարյանը։ Նա նշեց, որ հայ և վրաց ժողովուրդների մշակութային կապերի պատմության տարեգրությունը լի է երկու ժողովուրդների բարեկամությունը վկայող բազմաթիվ էջերով։ Մեր արվեստագետների համագործակցությունը նպաստում է երկու դրկից ժողովուրդների արվեստի էլ ավելի մերձեցմանն ու հետագա զարգացմանը։ Վերջում Ռ. Զարյանը հույս հայտնեց, որ կոնֆերանսը կնպաստի հայ և վրաց արվեստագիտության վերելքին, այն կհարստացնի նոր փաստական տվյալներով, ճշտումներով ու ընդհանրացումներով։

Առաջին պլենար նիստում, որը տեղի ունեցավ Հայաստանի արվեստի աշխատողների տանը, հանդես եկան հայ և վրաց մի խումբ արվեստագետներ, իրենց զեկուցումներում քննելով երկու ժողովուրդների արվեստի մի շարք խնդիրներ։ Հատկապես մեծ հետաքրքրություն առաջացրին արվեստագիտության դոկտոր Ք. Մաչաբելու (Թբիլիսի) և Լ. Բաբայանի (Երևան) զեկուցումները։

Ք. Մաչաբելու զեկուցումը նվիրված էր վաղ քրիստոնեական ժամանակաշրջանի վրացական հուշարձանների, մասնավորապես Սվանեթիում պահպանված բրոնզաձույլ բուրվառների քննությանը։ Լ. Բաբայանը խոսեց հայ ազգային ճարտարապետության զարգացման ասպարեզում Ա. Թամանյանի և Ռ. Իսրայելյանի ներդրած մեծ ավանդի մասին և ծանրացավ հայ ճարտարապետության այդ խոշոր երախտավորների ստեղծագործության ոճի ու սկզբունքների վրա։

Այնուհետև կոնֆերանսի աշխատանքները շարունակվեցին ըստ թեմատիկ մասնաճյուղերի՝ հին ու միջնադարյան արվեստի և նոր սովետական շրջանի արվեստի, որոնք ունեցան 7 նիստ։

Հին ու միջնադարյան արվեստի մասնաճյուղում կարդացված զեկուցումների թվում էին ճարտարապետության թեկնածուներ Մ. Հասրաթյանի ու Ս. Մնացականյանի, արվեստագիտության դոկտոր Ա. Վոլսկայայի (Թբիլիսի) և Լ. Չուգասզյանի (Երևան) զեկուցումները։

Բաղենի ամրոցի ճարտարապետությանը նվիրված զեկուցման մեջ Մ. Հասրաթյանը փաստական հարուստ հենքի վրա հանգեց այն եզրակացության, որ այդ ամրոցի ճարտարապետությունը փաստորեն ներկայացնում է միջնադարյան հայ ամրոցաշինության բոլոր հիմնական փուլերը։ Իր զեկուցման մեջ Ս. Մնացականյանը նկատեց, որ Հայաստանի և Վրաստանի միջնադարյան մշակույթների ուսումնասիրությունն ի հայտ է բերում ստեղծագործական որոշակի ընդհանրություններ, ինչպես նաև տարբերիչ առանձնահատկություններ, որոնք բնորոշ են նաև մեմորիալ հուշարձաններին։ Ա. Վոլսկայան Դավիթ Գարեջիի ժայռափոր եկեղեցիների որմնանկարների քննությանը նվիրված զեկուցման մեջ ցույց տվեց, որ հիշյալ որմնանկարների հիման վրա հնարավոր է լուծել միջնադարյան քրիստոնեական արվեստի հետ կապված մի շարք կարևոր հարցեր։ «Թարգմանչաց ավետարանի թեմատիկ լուսանցազարդերը» զեկուցման մեջ Լ. Չուգասզյանը նշեց, որ դրանք արվեստագիտական մեծ արժեք ներկայացնելուց բացի հնարավորություն են տալիս տեսնելու XII—XIII դարերը և անցյալի ավանդների միասնությունը։